



ԵԱՀԿ

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ



Ի. ԳՈՐԱՑԻԱՅԻ ԱՉՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Ծրագիրը համաֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից	Ծրագիրը համաֆինանսավորվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից	Իրականացնող Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա	Գործընկեր Ինֆորմացիայի ազատության կենտրոն	Իրականացնող «ՄԻԱՍԻՆ» հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության» ՀԿ	Իրականացնող «Հրեշտակ» մանկապատան եկան ՀԿ
---	---	--	---	---	--

«ՄԻԱՍԻՆ» ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԾԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ» ՀԿ

«ՀՐԵՇՏԱԿ» ՄԱՆԿԱՊԱՏՄԱՆԵԿԱՆ ՀԿ

«ՄԻԱՍԻՆ ԸՆԴԴԵՄ ԿՈՌՈՆՈՒՊՑԻԱՅԻ» ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

«Միասին ընդդեմ կոռուպցիայի» ծրագիրը իրականացրել է «ՄԻԱՍԻՆ» հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության» հասարակական կազմակերպությունը՝ գործընկեր՝ «Հրեշտակ» մանկապատանեկան հասարակական կազմակերպության հետ համատեղ՝ «Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 2,129,900 ՀՀ դրամ, որից 1,449,900 ՀՀ դրամը տրամադրվել է «Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի տևողությունն է՝ 2015թ. հուլիսի 1-ից մինչև 2015թ. հոկտեմբերի 31-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի կողմից:

ք. Արարատ
2015թ.

«Միասին ընդդեմ կոռուպցիայի» ծրագրի հաշվետվություն

«ՄԻԱՄԻՆ» հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության» հասարակական կազմակերպությունը՝ գործընկեր՝ «Հրեշտակ» մանկապատանեկան հասարակական կազմակերպության հետ համատեղ 2015թ. հուլիսի 1-ից հոկտեմբերի 31-ը իրականացրել է «Միասին ընդդեմ կոռուպցիայի» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագիրն իրականացվել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի կողմից:

Ծրագրի նպատակն էր բարձրացնել Արարատի քաղաքի և հարակից համայնքների ավագ դպրոցներում և միջին մասնագիտական հաստատություններում սովորողների և ծնողական խորհուրդների շրջանում կոռուպցիայի դեմ պայքարի միջոցների վերաբերյալ իրազեկվածության և նրանց իրավագիտակացության մակարդակը:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ գործողությունները.

1. Գործընկեր կազմակերպության ներկայացուցիչների հետ համատեղ անցկացվել են աշխատանքային հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել, մշակվել և տպագրվել են սեմինարների թեմատիկ նյութեր:
2. Ծրագրի շրջանակում կոռուպցիայի դեմ պայքարի, կոռուպցիոն երևույթների, դրանց դրսևորումների միջազգային փորձի վերաբերյալ ընտրված թիրախ խմբերի շրջանում իրազեկվածության աստիճանը բարձրացնելու նպատակով, սեպտեմբերի 5-30-ը Արարատ քաղաքի և հարակից համայնքների (Ոսկետափ և Սուրենավան գյուղական համայնքներ) դպրոցներում, Արարատի բժշկական քոլեջում անցկացվել են հակակոռուպցիոն դասընթացներ: Ծրագրով նախատեսած 250 մասնակցի փոխարեն դասընթացներին մասնակցել է 269 մասնակից:
3. Անցկացվել է սոցիոլոգիական հարցում 152 անձանց շրջանում, հանրակրթական դպրոցներում կոռուպցիոն երևույթների, դրանց դրսևորումների վերաբերյալ ամփոփ պատկեր ստանալու նպատակով:
4. 2015 թվականի հոկտեմբեր ամսին Արարատ և Արտաշատ քաղաքներում իրականացվել է արտաքին գովազդի տեղադրում:
5. Իրականացված սոցիոլոգիական հարցումների հիման վրա կազմվել է զեկույց՝ Արարատ քաղաքի և հարակից համայնքների հանրակրթական դպրոցների հիմնախնդիրների վերաբերյալ (այսուհետ՝ Ձեկույց):
6. Որպես ծրագրի ամփոփում՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ անցկացվել է հանդիպում - քննարկում, որի ընթացքում ներկայացվել է ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքները, մասնավորապես ներկայացվել են Ձեկույցում տեղ գտած խնդիրները, որոնց լուծման համար կարևորվել է, քաղաքացիական հասարակության դերը:
7. Ծրագիրը լուսաբանելու նպատակով ամփոփիչ հանդիպումից հետո տեղեկատվություն է ուղարկվել Արարատի մարզում տպագրվող «ԱՐԱՐԱՏ» ամսաթերթի խմբագրություն:

Դեկտեմբեր ամսվա համարում տազրվել է ծրագրի մասին պատմող նյութ: Ինչպես նաև վերոնշյալ Զեկույցի էլեկտրոնային տարբերակը ուղարկվել է Արարատի մարզպետարանի Կրթության վարչություն, Կրթության և գիտության նախարարության Հանրակրթության վարչություն և Արարատի մարզի բոլոր դպրոցներին՝ հուսալով, որ այն կարող է ուղեցույց հանդիսանալ հետագա իրենց գործունեության ընթացքում:

Ծրագրի շրջանակներում կազմված Զեկույցը կից ներկայացվում է սույն հաշվետվությանը որպես Հավելված 1:

«ՄԻԱՄԻՆ» հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության» ՀԿ նախագահ,
Ծրագրի ղեկավար Տիգրան Շիրինյան

«Հրեշտակ» մանկապատանեկան ՀԿ նախագահ

Իզաբելա Աղեկյան

30.10.2015